ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽՔԻ ՓՈԽԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Մայիսի 27-ին Վիրահայոց թեմի Սամցխե-Ջավախքի փոխառաջնորդության Մանկական Քարոզչական տիկնիկային թատրոն-ստուդիան հյուրախաղային իր ծրագիրը սկսեց Ախալքալաքի Գումբուրդո գյուղից: Բեմականացվում էր Աստվածորդու Սուրբ Ծնունդն ու նաև ինքնատիպ մի ներկայացում, որի հիմքում էին Աստծու Տասը պատվիրանները և Թումանյանական հեքիաթները:

Տիկնիկային թատրոնի հաջորդ հյուրընկալն են լինելու Ախալքալաքի Դիլիսկա, Արագովա և Մաջաղյա գյուղերը:

Տիկնիկային թատրոնն ունի մեկ տարվա պատմություն: Քրիստոնեական հավատքի քարոզման ու ամրապնդման նպատակով, այն հիմնվել է թեմական փոխառաջնորդ Տ. Բաբգեն աբեղա Սալբիյանի նախաձեռնությամբ և գործում է տեղացի երեխաների մասնակցությամբ: Ցուցադրվող ներկայացումների թեման կրոնական է, իսկ բեմականացումը՝ մատչելի և ուսանելի ոչ միայն փոքրիկների համար: Տիկնիկների խաղը բեմականացնում են երեխաները: Յուրաքանչյուր ներկայացում սկսվում է «Հայր մեր»-ով, որից հետո պատմվում է աստվածաշնչյան մեկ դրվագ, ու ներկաները սովորում են մեկ աղոթք:

Մայիսի 28-ին Վիրահայոց թեմի Սամցխե-Ջավախքի փոխառաջնորդությունում նշվեց Հայաստանի առաջին Հանրապետության հռչակման 88-ամյակը: Այդ օրը Ախալքալաք էին ժամանել հյուրեր Հայաստանից ու մերձակա շրջաններից:

Առավոտյան Ախալքալաքի Սուրբ Խաչ հայոց եկեղեցում մատուցվեց Տոնական Սուրբ և Անմահ Պատարագ՝ թեմական փոխառաջնորդ Տ. Բաբգեն աբեղա Սալբիյանի հանդիսապետությամբ: Պատարագիչն էր եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Սամվել քահանա Թորոսյանը: Հընթացս Ս. Պատարագի ընթերցվեց Հանրապետական մաղթանքը: Քարոզի իր խոսքում Հայր Բաբգենը շնորհավորեց եկեղեցում ներկա հավատացյալներին, քաղաքային վարչության ներկայացուցիչներին:

Սուրբ Արարողությանը Ջավախքի Սկաուտական կազմակերպության 20 պատանիներ մկրտվեցին ու դարձան որդեգիրները Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու: Հավարտ մկրտության կատարվեց երդման արարողություն՝ «Մեր հողը սուրբ է, ջուրը՝ մյուռոն, մարդիկ՝ կերոն» նշանաբանով: Սկաուտները Խաչի և Ավետարանի վրա երդվեցին լինել արժանի ժառանգներն իրենց ազգի և Սուրբ Եկեղեցու:

Հանդիսավոր արարողությանը հաջորդեց տոնական համերգը, որին իրենց մասնակցությունը բերեցին տեղական և հայաստանյան երգ ու պարի համույթներ ու անհատ կատարողներ: Ներկաների մի ամբողջ շարան կազմվեց և զուռնա-դհոլի ժողովրդական երաժշտության ներքո թնդաց ազգային Քոչարին ու Շուրջպարը:

Այդ օրը եկեղեցու բակում կատարվեցին նաև մատաղի արարողություններ:

Հանդիսությունները շարունակվեցին մինչև ուշ երեկո և ավարտվեցին տոնական հրավառությամբ:

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ